ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 09/2022

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԴԵՊՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 09 դեկտեմբեր 2022 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Ն. Համբարձումյանի (Նիստը նախագահող), Մ. Գալստյանի և Լ. Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Հանձնաժողովում 2022 թվականի դեկտեմբերի 5-ին ստացված Ալինա Արտաշեսի Գեղամյանի կողմից ներկայացված «Շիրակի մարզպետի կողմից բարեվարքության խախտման և շահերի բախման մասին» վերտառությամբ դիմումը.

պարզեց

1. Ըստ դիմումում առկա տեղեկությունների՝

1.1 Ալինա Գեղամյանը դիմումով վկայակոչել է այն հանգամանքը, որ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի կողմից խախտվել են հանրային ծառայողի վարքագծի սկզբունքները, այլ սահմանափակումները, դրսևորել է կամայական վարքագիծ՝ իր հետ փոխկապակցված անձին՝ եղբորը՝ Արման Բաղդասարյանին, նշանակել է ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 1 դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամ, որի կապակցությամբ դիմումին կից ներկայացրել է 2022 թվականի ապրիլի 26-ի որոշումը, որում նշված է, որ Արման Բաղդասարյանն առաջադրվել է մարզպետի կողմից: Այնուհետև մատնանշել է, որ նույն փաստական և իրավական

պայմաններում Էմմա Հարությունյանին հանել է նույն կազմակերպության կառավարման խորհրդից, իսկ Արման Բաղդասարյանին և Աղասի Մաթևոսյանին՝ ոչ:

1.2 Ալինա Գեղամյանը իր դիմումով վկայակոչել է «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ շահերի բախմանը վերաբերող օրենսդրական կարգավորումները, ըստ այդմ՝ գտել է, որ իր դիմումը հիմք է «Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու համար:

2. **Նշված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել հետևյալ փաստական տվյալները**.

2.1 Նազելի Հրաչյայի Բաղդասարյանը Շիրակի մարզպետի պաշտոնը ստանձնել է **2021 թվականի նոյեմբերի 8-ին**:

2.2 ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի առանձին խորհրդի անվանական կազմը հաստատելու, ՀՀ Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 19-ի N 78-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը, որով հաստատվել է առանձին խորհրդի կազմը, ընդունվել է ՀՀ Շիրակի մարզպետի կողմից **2022 թվականի ապրիլի 26-ին:**

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայնԿ վարույթ կարող է հարուցվել՝ յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա:Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը **պետական պաշտոն զբաղեցնող անձանց**, (---) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև **պետական պաշտոն զբաղեցնող անձանց** (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), (---) կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների կամ իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում **հարուցում է համապատասխան վարույթ**:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի **Հանձնաժողովը քննության է** առնում սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված դիմումը, եթե այն ներկայացվել է **խախտման կատարման պահից մեկ տարվա ընթացքում:**

«Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածի համաձայն՝

Շահերի բախումն **իրավիճակ է**, երբ **պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս** **կատարում է գործողություն** կամ **ընդունում որոշում**, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ **իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել**:

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի **անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է** անձի **լիազորությունների շրջանակում այնպիսի** **գործողություն կատարելը** կամ **որոշում ընդունելը** (**այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը**), **որը** թեև ինքնին օրինական է, սակայն **հանգեցնում** կամ նպաստում է կամ ողջամտորեն **կարող է հանգեցնել** կամ **նպաստել** նաև՝

1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ **իրավական դրության բարելավմանը**.

(...)

4) իր հետ փոխկապակցված անձին **պաշտոնում նշանակմանը**:

Օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց:

Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Օրենքի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները:

Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի,

դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա:

Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական վարչական պաշտոններն են (...) մարզպետների և նրանց տեղակալների, (...) պաշտոնները:

Կրթության և գիտության նախարարի 2010 թվականի «Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 113-Ն հրամանով հաստատված «Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հաստատության խորհուրդը կազմվում է՝ 9 անդամից՝ առանձին խորհրդի դեպքում, (...):

Կարգի 6-րդ կետի համաձայն՝ Խորհրդի անդամներին, առաջադրում են.

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը (այսուհետ՝ նախարար),

2) լիազորված մարմինը, (2-րդ կետի համաձայն՝ մարզպետարանը և Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ լիազորված մարմին))

3) մանկավարժական խորհուրդը (միացյալ խորհրդի դեպքում՝ յուրաքանչյուր հաստատության մանկավարժական խորհուրդը),

4) ծնողական խորհուրդը (միացյալ խորհրդի դեպքում՝ յուրաքանչյուր հաստատության ծնողական խորհուրդը)՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներին կից հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների,

5) համայնքի ղեկավարը:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ մարզային ենթակայության հաստատությունների.

1) առանձին խորհուրդներում մարզպետն առաջադրում է խորհրդի 4 անդամ, որից մեկին գրավոր ձևով մարզպետին է ներկայացնում տվյալ համայնքի ղեկավարը,(...)

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ Խորհրդի անդամի լիազորությունները, լիազորությունների դադարեցման հիմքերը, պարտավորությունները սահմանվում են հանրակրթության մասին օրենքով:

«Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պետական ուսումնական հաստատության խորհուրդը՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ընտրում է տնօրեն.

2) հաստատում է ուսումնական հաստատության կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները.

3) հավանություն է տալիս ուսումնական հաստատության զարգացման ծրագրին.

4) քննարկում և հավանություն է տալիս ուսումնական հաստատության հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին.

5) կարող է սահմանել պակաս խտությամբ դասարան՝ ուսումնական հաստատության լրացուցիչ միջոցների հաշվին.

6) տնօրենի ներկայացմամբ քննարկում է ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, տալիս է հավանություն և ներկայացնում պետական լիազորված մարմնի հաստատմանը.

7) քննարկում է ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները.

8) որոշում է մասնակցել արտաքին գնահատման, քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները.

9) վերահսկում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարումը.

10) հիմնադրի սահմանած կարգով սահմանում է ուսումնական հաստատության շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները.

11) առաջարկություններ է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան.

12) հաստատում է իր աշխատակարգը և հաստատության կանոնադրությամբ ու խորհրդի ընտրության կարգի համաձայն՝ ընտրում է խորհրդի նախագահ.

13) իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված և (կամ) հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

«Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պետական ուսումնական հաստատության խորհրդի անդամը պարտավոր է՝

1) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել խորհրդի նիստերին, գործել բարեխղճորեն՝ ի նպաստ երեխայի շահերի և կրթության արդյունավետության.

2) պատշաճորեն կատարել սույն օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված և խորհրդի որոշումներով (հանձնարարականներով) իրեն վերապահված պարտականությունները.

3) կատարել խորհրդի, իրեն ներկայացրած՝ լիազոր մարմնի այն հանձնարարությունները, որոշումները, որոնք բխում են ուսումնական հաստատության կանոնադրական նպատակներից:

«Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պետական ուսումնական հաստատության խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են լիազորված մարմնի կողմից՝

1) այդ մասին անձնական դիմում ներկայացնելու,

2) անդամին լիազորած մարմնի հիմնավորված հետկանչի,

3) խորհրդի որոշմամբ՝ հիմնավորված առաջարկության,

4) մեկ տարվա ընթացքում խորհրդի առնվազն երեք նիստի չներկայանալու,

5) դատական կարգով անգործունակ կամ անհայտ բացակայող կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու,

6) ուսումնական հաստատության լուծարման կամ վերակազմակերպման,

6.1) խորհրդի կազմում սահմանված կարգի խախտմամբ ընդգրկված լինելու,

7) նրա մահվան դեպքերում:

Սույն դեպքում Նազելի Բաղդասարյանը, **2021 թվականի նոյեմբերի 8-ին նշանակվելով ՀՀ Շիրակի մարզպետի պաշտոնում, 2022 թվականի ապրիլի 26-ին հաստատել է** «Ախուրյանի թիվ 1 դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կազմը՝ կազմում ընգրկելով իր եղբորը՝ Արման Բաղդասարյանին, ով, որպես կառավարման խորհրդի անդամ, առաջադրվել է Շիրակի մարզպետի կողմից: Տվյալ պաշտոնը (խորհդրի անդամ) ենթադրում է որոշակի կառավարչական լիազորություններ՝ ընտրում է տնօրեն, հաստատում է ուսումնական հաստատության կազմակերպական կառուցվածքը, տնօրենի ներկայացմամբ քննարկում է ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, տալիս է հավանություն և ներկայացնում պետական լիազորված մարմնի հաստատմանը և այլն: Բացի այդ, Խորհրդի անդամի պարտականությունների շրջանակը ի թիվս այլնի ներառում է նաև խորհրդի, իրեն ներկայացրած՝ լիազոր մարմնի այն հանձնարարությունների, որոշումների կատարումը, որոնք բխում են ուսումնական հաստատության կանոնադրական նպատակներից:Վերոնշյալի համատեքստում հարկ է արձանագրել, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արման Բաղդասարյանին առաջադրել է Շիրակի մարզպետը՝ նա պարտավոր է կատարել իր հետ փոխկապակցված անձի՝ քրոջ հանձնարարությունները:

Վերոգրյալի համատեքստում հարկ է արձանագրել, որ Խորհրդի անդամի պաշտոնի առանձնահատկություններից ելնելով՝ տվյալ մեկնաբանությունը կիրառելի է նաև նշված իրավահարաբերությունների պարագայում:

Վերոգրյալից հետևում է, որ Նազելի Բաղդասարյանը Օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձին նշանակել է պաշտոնի, որը առերևույթ հանգեցրել է շահերի բախման:

Նազելի Բաղդասարյանը հաստատելով «Ախուրյանի թիվ 1 դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կազմը, կատարել է գործողություն, որով իր հետ փոխկապակցված անձին՝ իր եղբորը՝ Արման Բաղդասարյանին, ընդգրկել է կառավարման խորհրդում որպես կառավարման խորհրդի անդամ և հաշվի առնելով սույն որոշման մեջ վկայակոչված լիազորությունները, որոնք «Հանրակրթության

մասին» օրենքով վերապահված են կառավարման խորհրդի անդամին, հանգեցրել է իր հետ փոխկապակցված անձի իրավական դրության բարելավմանը:

Վերոգրյալից հետևում է, որ Կառավարման խորհրդի անդամը պարտավոր է կատարել որոշակի կառավարչական լիազորություններ, որոնք բնորոշ են պաշտոն զբաղեցնող անձին, հետևաբար Մարզպետի գործողությունները որակվում են որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի իրավական դրության բարելավում, ինչպես նաև իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակում:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով, ինչպես նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի կողմից իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով հարուցել վարույթ:
2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանին:
3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել դիմումատու Ալինա Գեղամյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԵԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ